ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МЕРИЯ ЦАХКАЛАНДЖ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնք, 4-րդ փողոց N9
No 15
«07» «06» 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից Ձեզ ենք ներկայացնում Ծաղկալանջ համայնքի ավագանու 2013 թվականի հունիսի 3-ի N2-Ն որոշման ճշգրտված տարբերակը: Ծաղկալանջ համայնքի ավագանու 2013 թվականի հունիսի 3-ի N2-Ն որոշման նախորդ տարբերակը թողնել անհետևանք :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 3296-13
«10» 06 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնք, 4-րդ փողոց N9

# ՈՐՈՇՈՒՄ

3 հունիսի 2013 թվականի N 2-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՎՐԱ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝

*Ծաղկալանջ համայնքի ավագանին որոշում է.*

1. Թույլատրել Ծաղկալանջ համայնքի ղեկավարին՝ Ծաղկալանջ համայնքի սեփականություն համարվող 2010 թվականին կառուցված 14401600 դրամ հաշվեկշռային արժեքով 2 հակակարկտային կայանքները հանձնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարմանը:

2. Ծաղկալանջ համայնքի ղեկավարին՝ կայանքի վերազինումից հետո Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել կառավարման համապատասխան պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | կողմ (ստոր.) | դեմ (ստոր.) | ձեռնպահ (ստոր.) |
|---|---|---|---|
| 1. Երվանդյան Երվանդ | | | |
| 2. Դավթյան Գևորգ | | | |
| 3. Պողոսյան Մխիթար | | | |
| 4. Առաքելյան Վաչագան | | | |
| 5. Միքայելյան Դեմիրճ | | | |
| 6. Ղազարյան Ալիկ | | | |

***ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***/Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/***